View metadata, citation and similar papers at core.ac.uk
brought to you by CORE
provided by Policy Documentation Center

ACNIS Policy Brief
Number Two
April 2009

The Armenian Center
for National and International Studies

ACNIS POLICY BRIEF
Number Two
April 2009

THE MILITARY BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS

Richard Giragosian
ACNIS Director

Summary

Nearly eight months after a brief but deadly war in Georgia, the outlook for security and stability in the South Caucasus remains far from certain. The August 2008 war between Georgia and Russia dramatically altered the geopolitical landscape of the region, consolidating a clear reassertion of Russian power and influence and forcibly "resolving" two of the region's three formerly "frozen" conflicts. The Georgian war also raised new doubts over Georgia's strategic role as the regional "center of gravity" for the West and effectively ended Georgia's hopes to join the NATO alliance within a broader context of regional security and stability.

But the August 2008 war further demonstrated a dramatic shift in the region's delicate balance of power, which has already reconfigured the threat perception and military posture of the region. More specifically, the changing nature of the regional military balance of power is compounded by two factors:

> (1) a sustained increase in defense spending, which has only impeded and subverted the course of reform and development in the region, and
>
> (2) an overall trend of "militarization" in the region, with the amplification of militant discourse and threats of war heightening tension and increasing the danger of renewed military hostilities or war.

A Regional "Arms Race"

The emergence of a virtual "arms race" in the region first started in 2004, as annual defense-related expenditures increased annually. Although the precise composition of military spending differs among each of the three countries of the region, the defense spending has steadily and consistently increased over the past five years, with each country devoting an ever-larger share of limited revenue and resources to defense spending.

Despite Azerbaijan's larger defense budget, the largest increase in defense spending in the region has actually been in Georgia. While Georgia's increased defense spending was linked to the country's strategic priority of closer integration into Western security institutions, reflected by its desire to join NATO, there are new concerns over the implications of any further efforts to rebuild the Georgian armed forces in light of the aftermath of the August 2008 war and the loss of Abkhazia and South Ossetia.

Azerbaijan has also implemented a steady and serious increase in its defense budget, largely driven by the influx of wealth from its energy sector. Most notably, Azerbaijan has increased its defense budget from $175 million in 2004 to almost $2.5 billion for 2009. But given the extent of corruption within the country, the increase in the annual defense budget has not been used to either invest in developing or training a more capable armed forces, or for procuring modern military weapons. A similar, but much less substantial, increase in defense spending has also been underway in Armenia, largely due to the pressure of feeling compelled to keep pace with Azerbaijan. But Armenian defense spending has been the lowest in the region, with Azerbaijan spending five times more than Armenia on its military for 2009 (see chart below).

The South Caucasus: Regional Military Spending (2004-2009)			
Year	***Armenia***	***Azerbaijan***	***Georgia***
2009	$495.3 million	$2.46 billion	N/A
2008	$370 million	$2 billion	$572 million
2007	$273 million	$1.3 billion	$575 million
2006	$166 million	$700 million	$218 million
2005	$136 million	$300 million	$146 million
2004	$81 million	$175 million	$60 million

Sources: *SIPRI Database, Jane's Information Group,Radio Free Europe/Radio Liberty (RFE/RL), local sources*

The Shifting Military Balance of Power

Since the August 2008 war in Georgia, the shift in the region's already delicate balance of power has become apparent, actually presenting an even more serious challenge to regional stability and security. In light of the virtual "arms race" in rising defense spending, the danger of a new wave of rearmament, amid an overall climate of

militarization, suggests that any change in the fragile military balance of power in the region could pose a serious threat to security. And with Nagorno Karabagh now the sole unresolved or "frozen" conflict in the region, any new imbalance of military power threatens the capacity for maintaining relative peace and stability in the region.

In addition, there is a related worry over the long-term impact from such a militarization of the region, especially for Armenia, as Azerbaijan has been using its oil wealth to fuel ever-larger defense budgets. Most worrying for Armenia, the constant drone of Azerbaijan's militant rhetoric to "solve" the Nagorno Karabagh conflict by force has been bolstered by several years of billion-dollar-plus defense budgets. That combination of militant rhetoric and military spending now poses one of the most serious threats to regional security and stability.

Assessing the Armed forces of Armenia and Nagorno Karabagh

For the past fifteen years, Armenia has been consistently rated as one of the most formidable military powers among all of the former Soviet states. Armenia's military prowess is generally identified traced to its high level of discipline, morale and training, although Azerbaijan's potential as a military power suggests that Armenia is in danger of losing its comparative edge within the coming decade, necessitating a much more intensive program of military reform.

In many ways even surpassing the highly rated Armenian armed forces, the Nagorno Karabagh military is assessed as an even more capable and professional force. Despite its small size, the Karabagh army is in a state of constant readiness, undergoing more serious and sustained combat training and operational exercises than any other former Soviet army. But the most significant advantage for Karabagh is in terms of unit morale, marked by an impressive degree of professionalization and discipline within its ranks. The Karabagh forces also hold a degree of self-sufficiency and a significant small-force capability, are relatively well-organized and equipped, and enjoy a high degree of training and leadership. There is also a high degree of operational readiness and consistent maintenance of its combat systems and equipment.

At the height of the conflict with the much larger Azerbaijani armed forces, the Karabagh armed forces became rapidly seasoned in defensive warfare, developing and enhancing its native capabilities as mountain troops skilled in guerrilla warfare techniques. These special operations capabilities were combined with impressive unit mobility. Exceptionally well armed, these mobile units specialized in traditional special operational warfare, with quick confrontations utilizing overwhelming firepower. Large

campaigns and engagements were launched only rarely, as the Karabagh forces prudently relied on their operational and tactical advantages of mobility and fast attack.

Karabagh anti-aircraft defense, utilizing surface-to-air missiles (SAMs) and other similar ground-launched weapons, inflicted a heavy toll and tempered Azerbaijan's air superiority in the early stages of the conflict. The mountainous terrain and related climate in Karabagh were also detrimental to any effective air campaign and demonstrated the situational awareness and operational command of the Karabagh forces. The combination of these factors effectively marginalized the Azerbaijani numerical advantage in infantry and artillery during the war.

The other significant advantage of the Karabagh forces is the quality of its officer corps and its strategic leadership. During the conflict, the clear majority of the Karabagh officer corps included seasoned and well-decorated veterans of the Soviet military, many with significant combat experience in Afghanistan that was applied in specific operations. The Karabagh military is predominantly a ground force, with a minor helicopter component currently inoperable. The Karabagh Army is a dynamically developing and combat-ready force with effective command and control and endowed with border guard, air defense, heavy and light artillery, mechanized infantry, engineering, intelligence and special operations units.

Karabagh holds a robust ground-based air defense capability, however, although any significant combat air support must be provided by Armenia. The Karabagh force operates predominantly along Soviet operational lines, using former Soviet and Russian equipment. The equipment holdings of the Karabagh forces are significant and continue to be reinforced. The equipment is well-maintained, although there are sporadic repair problems and some shortages of spare parts for its tanks and armored personnel vehicles. As both a formidable foe and as an established military power in its right, the Nagorno Karabagh military serves as critical component to the regional balance of power, however, and its military strength and capability acts as a deterrent to the possible resumption of hostilities. In this way, the Nagorno Karabagh Army actually contributes to regional stability in the South Caucasus. The Karabagh Army is also the main guarantor of security and, due to its stated policy of abstaining from politics, defends the constitutional order and serves the democratically elected government of the Nagorno Karabagh Republic (NKR).

For the time being at least, Nagorno Karabagh remains fairly secure, mainly due to the impressive professionalism and high state of readiness of the Karabagh military, in contrast to the generally poor state of affairs within the Azerbaijani armed forces. Most

crucially, the tactical advantages of the Karabagh military's well-entrenched defensive fortifications also deter Azerbaijani aggression in the medium-term.

The Azerbaijani Armed Forces

In contrast to both Armenian and Nagorno Karabagh, Azerbaijan has a military that remains weak and poorly equipped. With an overall strength of some 72,000 men in uniform, the Azerbaijani Army is considerably larger than its neighbors. But its army continues to face a significant set of internal constraints, all of which stem from the fundamental problem of corruption. Related problems within the Azerbaijani armed forces include low morale, poor living conditions and inadequate supplies. But Azerbaijan has clearly emerged as a rising power and within five to ten years, will most likely be the dominant military within the Caspian region.

Lastly, Georgia has the smallest force in the region, numbering only about 17,500 active duty personnel. But despite its still small size, the Georgian government has embarked on a serious path of defense reform, bolstered by its continued military ties with the US and by the promise of approaching membership in the NATO alliance. This Georgian commitment to forging a new military capability was rooted in its strategic desire to restore statehood and territorial integrity. Georgia has made some progress in reforming its armed forces, although that effort was shown to be ineffective and incomplete during the onset of the August 2008 war.

Conclusion

Against the backdrop, it is clear that the military balance of power has returned as one of the most crucial considerations for regional security and stability. But at the same time, the real imperatives for regional security and stability are, nevertheless, internal in nature and depend far more on institutional legitimacy, the rule of law and good governance, and on local economics and politics than grand geopolitics.

Richard Giragosian
ACNIS Director

Ռազմավարական եւ ազգային
հետազոտությունների հայկական կենտրոն

ՌԱՀՀԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Թիվ երկու
Ապրիլ, 2009թ.

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռիչարդ Կիրակոսյան
ՌԱՀՀԿ տնօրեն

Համառոտ ակնարկ

Վրաստանի կարճատեւ, սակայն ավերիչ պատերազմից գրեթե ութ ամիս անց Հարավային Կովկասի անվտանգության ու կայունության հեռանկարները շարունակում են մնալ անորոշ: 2008թ. օգոստոսին Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ ծավալված պատերազմը էականորեն փոխեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը՝ մեկտեղելով ռուսական ուժի ու ազդեցության հստակ վերահաստատումը եւ տարածաշրջանում առկա երեք «սառեցված» հակամարտություններից երկուսի հարկադիր «հանգուցալուծումը»: Վրացական պատերազմը նաեւ առիթ հանդիսացավ Վրաստանի՝ որպես Արեւմուտքի «ձգողականության կենտրոնի», ռազմավարական դերակատարման նկատմամբ նոր կասկածների առաջացման համար եւ բարեհաջող կերպով ի չիք դարձրեց ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի հույսերը՝ տարածաշրջանային անվտանգության ու կայունության ավելի լայն համատեքստում:

Սակայն 2008թ. օգոստոսյան պատերազմը ավելի ակներեւ դարձրեց տարածաշրջանում ուժերի փխրուն հավասարակշռության էական խախտումը, ինչն արդեն իսկ վերափոխել է վտանգի ընկալումը եւ տարածաշրջանի ռազմական կեցվածքը: Տարածաշրջանի ռազմական ուժերի հավասարակշռության փոփոխվող բնույթը մասնավորապես պայմանավորված է երկու գործոններով.

(1) պաշտպանական ծախսերի կայուն աճը, ինչը միայն խոչընդոտեց եւ, ըստ էության, տապալեց տարածաշրջանում իրագործվող բարեփոխումների ընթացքն ու զարգացումը, եւ

(2) համընդհանուր «ռազմականացման» միտումը, ինչն ուղղորդվում է ռազմատենչ հայտարարությունների եւ պատերազմի սպառնալիքների ավելացմամբ, որոնք բարձրացնում են լարվածության աստիճանը, ինչպես նաեւ մեծացնում ռազմական գործողությունների կամ պատերազմի վերսկսման վտանգը:

Տարածաշրջանային «սպառազինությունների մրցավազք»

Ըստ էության, «սպառազինությունների մրցավազքը» տարածաշրջանում ի հայտ եկավ 2004թ., երբ պաշտպանության ոլորտին առնչվող տարեկան ծախսերում տարեցտարի սկսեց աճ արձանագրվել: Չնայած նրան, որ երեք երկրների ռազմական ծախսերի բուն կառուցվածքը տարբեր է, վերջին հինգ տարիների ընթացքում պաշտպանական ծախսերում գրանցվել է կայուն եւ հետեւողական աճ, քանի որ երկրներից յուրաքանչյուրն իր սահմանափակ եկամուտների ու պաշարամիջոցների ավելի ու ավելի մեծ բաժինն է հատկացնում այս ոլորտին:

Եվ, սակայն, ամենից մեծ պաշտպանական բյուջեն ունի Ադրբեջանը, տարածաշրջանում ռազմական ծախսերի ամենամեծ աճն իրականում գրանցվեց Վրաստանում: Թեպետ Վրաստանի ռազմական ծախսերի աճը կապված էր երկրի արեւմտյան անվտանգության ինստիտուտներին ավելի սերտորեն ինտեգրվելու ռազմավարական առաջնայնության հետ, ինչն արտահայտվեց ՆԱՏՕ-ին անդամակցելու՝ Վրաստանի ցանկության միջոցով, երեւան են եկել նոր մտահոգություններ՝ կապված Վրաստանի զինված ուժերի վերականգնմանն ուղղված հետագա ջանքերի գործադրման նպատակահարմարության հետ, եւ դա պայմանավորված է 2008թ. օգոստոսին տեղի ունեցած պատերազմի հետեւանքներով, ինչպես նաեւ Աբխազիան եւ Հարավային Օսիան կորցնելու հանգամանքով:

Ադրբեջանում նույնպես գրանցվել է պաշտպանական բյուջեի կայուն եւ տպավորիչ աճ, ինչը հիմնականում պայմանավորված է երկրի էներգետիկ ոլորտից հարստությունների ներհոսքով: Մասնավորապես՝ Ադրբեջանը ավելացրեց 2004թ. դրությամբ 175 մլն դոլար կազմող իր պաշտպանական բյուջեի ծավալը՝ հասցնելով այն գրեթե 2.5 մլրդ դոլարի 2009թ. համար: Սակայն, հաշվի առնելով երկրում առկա կոռուպցիայի ծավալները, պաշտպանական բյուջեի տարեկան աճը չի ծառայել ո՛չ ավելի կարող զինված ուժերի զարգացմանն ու ուսուցմանը, ո՛չ էլ ժամանակակից սպառազինության ձեռքբերմանը: Նմանատիպ, սակայն շատ ավելի փոքրածավալ պաշտպանական ծախսերի աճ է արձանագրվել նաեւ Հայաստանում, ինչը մեծապես պայմանավորված էր Ադրբեջանից ետ չմնալու ճնշող պարտավորությամբ: Մինչդեռ տարածաշրջանում ամենացածր պաշտպանական ծախսերն ունի հենց Հայաստանը, այն դեպքում, երբ Ադրբեջանը 2009թ. համար իր ռազմական ոլորտին

հատկացրել է հինգ անգամ ավելի շատ միջոցներ, քան Հայաստանը (տե՛ս ստորեւ աղյուսակը):

Հարավային Կովկաս. Տարածաշրջանային ռազմական ծասերը (2004-2009թթ.)			
Տարեթիվ	*Հայաստան*	*Ադրբեջան*	*Վրաստան*
2009	495.3 մլն դոլար	2.46 մլրդ դոլար	Ա/Չ
2008	370 մլն դոլար	2 մլրդ դոլար	572 մլն դոլար
2007	273 մլն դոլար	1.3 մլրդ դոլար	575 մլն դոլար
2006	166 մլն դոլար	700 մլն դոլար	218 մլն դոլար
2005	136 մլն դոլար	300 մլն դոլար	146 մլն դոլար
2004	81 մլն դոլար	175 մլն դոլար	60 մլն դոլար

Աղբյուրներ: SIPRI Database, Jane's Information Group,Radio Free Europe/Radio Liberty (RFE/RL), տեղական աղբյուրներ

Ռազմական ուժերի փոփոխվող հավասարակշռությունը

2008թ. Վրաստանի օգոստոսյան պատերազմից ի վեր տարածաշրջանի ուժերի արդեն իսկ բավականին փխրուն հավասարակշռության խախտումը դարձավ ակներեւ՝ իրականում շատ ավելի լուրջ մարտահրավեր հանդիսանալով տարածաշրջանի կայունության եւ անվտանգության համար: Հաշվի առնելով փաստացի «սպառազինությունների մրցավազքը», որն արտահայտվում է հետզհետե աճող պաշտպանական ծախսերի միջոցով, համընդհանուր ռազմականացված միջավայրի պայմաններում սպառազինման նոր ալիքի վտանգը ենթադրում է, որ ռազմական ուժերի առանց այն էլ փխրուն հավասարակշռության որեւէ փոփոխություն կարող է վտանգել տարածաշրջանի անվտանգությունը: Իսկ նկատի ունենալով նաեւ Լեռնային Ղարաբաղի գործոնը, որն այս պահի դրությամբ մնում է տարածաշրջանի միակ չհանգուցալուծված «սառեցված»

հակամարտությունը, ռազմական ուժերի որեւէ նոր անհավասարակշռություն կվտանգի տարածաշրջանում համեմատական խաղաղության եւ կայունության պահպանման հնարավորությունը:

Ավելին, կա նաեւ լրացուցիչ մտահոգություն՝ կապված տարածաշրջանի նմանատիպ ռազմականացման երկարաժամկետ ազդեցության հետ, հատկապես Հայաստանում, քանի որ Ադրբեջանը նավթից գոյացող հարստությունն օգտագործում է իր պաշտպանական բյուջեի ծավալներն ավելի ու ավելի մեծացնելու նպատակով: Հայաստանի համար ամենից մտահոգիչն այն է, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը ուժի միջոցով «լուծելու»՝ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների չդադարող աղմուկը զուգորդվում էր մի քանի տարիների ընթացքում միլիարդավոր դոլարներով ավելացող պաշտպանական բյուջեներով: Ռազմատենչ հայտարարությունների ու ռազմական ծախսերի նմանօրինակ համակցումն այս պահի դրությամբ տարածաշրջանային անվտանգության եւ կայունության ամենամեծ վտանգներից մեկն է:

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի գնահատումը

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում նախկին խորհրդային պետությունների մեջ Հայաստանը հետեւողականորեն գնահատվում էր որպես ամենահզոր ռազմական ուժերից մեկը: Հայաստանի զինվորականների վարպետությունը հիմնականում բացատրվում է զինված ուժերում առկա բարձր կարգապահությամբ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտով եւ պատրաստվածությամբ: Չնայած դրան, Ադրբեջանի ռազմական ներուժը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկա տասնամյակում Հայաստանը կանգնելու է իր համեմատության եզրերը կորցնելու վտանգի առջեւ, ինչը ռազմական բարեփոխումների շատ ավելի արդյունավետ ծրագրի անհրաժեշտություն է առաջ բերում:

Շատ առումներով Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը նույնիսկ գերազանցում են Հայաստանի բարձր վարկանիշ ունեցող զինված ուժերին՝ համարվելով ավելի կարող եւ արհեստավարժ ուժ: Չնայած իր փոքր թվաքանակին, Ղարաբաղի բանակը մշտական պատրաստականության վիճակում է: Այն անցնում է շատ ավելի լուրջ եւ հետեւողական մարտական ու օպերատիվ վարժանքներ, քան նախկին խորհրդային որեւէ այլ բանակ:

Սակայն Ղարաբաղի ամենաէական առավելությունը ստորաբաժանումների բարոյահոգեբանական վիճակն է, որը բնութագրվում է տպավորիչ արհեստավարժությամբ ու կարգապահությամբ: Ղարաբաղի զինված ուժերին բնորոշ են ինքնաբավությունը եւ փոքրաթիվ ուժին հատուկ նշանակալի կարողությունները: Ղարաբաղի զինված ուժերն առանձնանում են համեմատաբար լավ կազմակերպվածությամբ եւ սպառազինմամբ, բացի դրանից, ապահովվում են բարձր աստիճանի պատրաստվածություն եւ որակյալ ղեկավարում: Դրանցում բարձր մակարդակում են նաեւ օպերատիվ պատրաստականությունը, մարտական համակարգերի ու սարքավորումների հետեւողական խնամքը:

Հակամարտության ամենաթեժ պահին՝ ադրբեջանական շատ ավելի մեծ թվաքանակ ունեցող զինված ուժերի առկայության պայմաններում, Ղարաբաղի զինված ուժերն արագորեն հմտացան պաշտպանական պատերազմ վարելու մեջ՝ զարգացնելով ու բարելավելով իրենց բնորոշ ունակությունները, դառնալով պարտիզանական պատերազմի հնարքներին տիրապետող լեռնային զորամիավորումներ: Հատուկ գործողություններ կատարելու այս կարողությունների հետ մեկտեղ ստորաբաժանումներն ունեին տպավորիչ շարժունակություն: Բացառապես լավ զինված այս մոբիլ ստորաբաժանումները մասնագիտանում էին ավանդական հատուկ ռազմական գործողություններ վարելու մեջ՝ չափազանց մեծ քանակությամբ հրազենի կիրառմամբ եւ արագ հարձակումների միջոցով: Լայնածավալ ռազմարշավներն ու բախումները հազվադեպ էին, քանի որ Ղարաբաղի զինված ուժերը խելամտորեն հիմնվում էին իրենց օպերատիվ եւ մարտավարական առավելությունների վրա, որոնց հիմքում ընկած էին շարժունակությունն ու արագ հարձակումները:

Ղարաբաղի հակաօդային պաշտպանությունը՝ կիրառելով «երկիր-օդ» դասի հրթիռներ եւ վերգետնյա պաշտպանության նմանատիպ այլ միջոցներ, պատերազմի սկզբնական շրջանում պատճառեց մեծ վնասներ եւ հակակշռեց Ադրբեջանի օդային առավելությունը: Ղարաբաղի լեռնային տեղանքը եւ դրանից բխող կլիմայական առանձնահատկությունները նույնպես առանցքային նշանակություն ունեին արդյունավետ օդային հարձակում իրականացնելու հարցում եւ ցույց տվեցին Ղարաբաղի զինված ուժերի՝ իրավիճակին տիրապետելու աստիճանն ու օպերատիվությունը: Այս գործոնների համադրությունը արդյունավետորեն չեզոքացրեց պատերազմի

ընթացքում ադրբեջանական բանակի հրետանու եւ հետեւակի քանակական առավելությունը:

Ղարաբաղյան զինված ուժերի մյուս էական առավելությունը սպայական կազմի եւ ռազմավարական ղեկավարության պատրաստվածության բարձր որակն է: Պատերազմի ժամանակ ղարաբաղյան սպայակազմի ակնհայտ մեծամասնությունը բաղկացած էր խորհրդային բանակի փորձառու եւ բազմաթիվ պարգեւների արժանացած վետերաններից, որոնցից շատերն ունեին Աֆղանստանում ձեռք բերած եւ գլխավորապես հատուկ գործողություններում կիրառվող բավական մեծ մարտական փորձ:

Ղարաբաղի զինված ուժերը հիմնականում բաղկացած են ցամաքային զորքերից, ինչպեսեւ փոքր ուղղաթիռային բաղադրիչից, որն այս պահին շահագործման ենթակա չէ: Ղարաբաղի բանակը դինամիկ զարգացող ու մարտունակ ուժ է, որն ունի կառավարման ազդու համակարգ, ապահովված է սահմանապահ զորքով, օդային պաշտպանությամբ, թեթեւ եւ ծանր հրետանիով, մեքենայացված հետեւակով, ինժեներական, հետախուզական եւ հատուկ գործողություններ իրականացնող ստորաբաժանումներով:

Ղարաբաղն ունի օդային պաշտպանության վերգետնյա մեծ հնարավորություններ, սակայն ցանկացած նշանակալի օդային մարտում, այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի Հայաստանի օժանդակությունը: Ղարաբաղի զինված ուժերը գործում են հիմնականում խորհրդային օպերատիվ գծերի երկայնքով եւ օգտագործում են նախկին խորհրդային կամ ռուսական սարքավորումներ: Ղարաբաղի զինված ուժերն արդեն իսկ ունեն սարքավորումների զգալի պաշարներ, որոնք շարունակում են համալրվել: Սարքավորումները լավ վիճակում են, բայց երբեմն առաջանում են վերանորոգման խնդիրներ, ինչպես նաեւ զգացվում է տանկերի ու զրահամեքենաների պահեստամասերի կարիք:

Ե՛վ որպես ուժեղ հակառակորդ, եւ՛ որպես կայացած զինված ուժ Լեռնային Ղարաբաղի զորքը առանցքային դերակատարում ունի տարածաշրջանում ուժերի հավասարակշռության առումով: Միեւնույն ժամանակ՝ նրա ռազմական ուժն ու կարողությունը զսպում են պատերազմի վերսկսման հնարավորությունը: Այդպիսով Լեռնային Ղարաբաղի բանակը փաստորեն նպաստում է Հարավային Կովկասի տարածաշրջանային կայունությանը:

Ղարաբաղի բանակն անվտանգության հիմնական երաշխավորն է եւ, շնորհիվ քաղաքականությանը չմիջամտելու իր իսկ հռչակած ռազմավարության, պահպանում է սահմանադրական կարգը եւ ծառայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) ժողովրդավարական ուղով ընտրված կառավարությանը:

Թերեւս մինչեւ հիմա Լեռնային Ղարաբաղն իր անվտանգությունը պահպանում է հիմնականում շնորհիվ բանակի բարձր արհեստավարժության պատրաստվածության՝ ի հակադրություն Ադրբեջանի զինված ուժերում տիրող բավականին խղճուկ վիճակի: Պակաս կարեւոր չէ նաեւ այն, որ Ղարաբաղի՝ հիմնավորապես խրամապատված պաշտպանական ամրաշինությունները, մարտավարական առավելություն հանդիսանալով հանդերձ, միջնաժամկետ կտրվածքում եւս մեկ պատնեշ են ադրբեջանական ագրեսիայի դեմ:

Ադրբեջանի զինված ուժերը

Ի տարբերություն ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանն ունի զորք, որը շարունակում է մնալ թույլ եւ վատ սպառազինված: Ունենալով մոտ 72 հազար զինվորական համազգեստ կրող մարդկանցից բաղկացած բանակ՝ Ադրբեջանի զինված ուժերը թվաքանակով էականորեն գերազանցում են հարեւան երկրների բանակներին: Սակայն Ադրբեջանի բանակը դեռեւս շարունակում է դիմակայել մի շարք զգալի սահմանափակումների, որոնք բխում են հիմնարար այնպիսի մի խնդրից, ինչպիսին է կոռուպցիան: Ադրբեջանական զինված ուժերում սրանով պայմանավորված խնդիրների թվում են բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը, կյանքի վատ պայմանները եւ պարենի ոչ լիարժեք ապահովումը: Այդուհանդերձ՝ Ադրբեջանը հստակորեն հանդես է գալիս որպես հզորացող ուժ եւ 5-10 տարիների ընթացքում, ամենայն հավանականությամբ, կունենա կասպյան տարածաշրջանի ամենագերակշռող զորքը:

Եվ, վերջապես, Վրաստանի զինված ուժերը տարածաշրջանում ամենափոքրն են՝ ունենալով 17.500 թվաքանակով կանոնավոր բանակ: Սակայն, չնայած դեռեւս փոքր թվաքանակին, Վրաստանի կառավարությունը բռնել է պաշտպանական ոլորտի բարեփոխումների դժվարին ուղին՝ հիմնվելով ԱՄՆ հետ շարունակական ռազմական կապերի եւ ՆԱՏՕ-ի

անդամակցությանը մերձենալու խոստման վրա: Նոր ռազմական կարողություններ ստեղծելու՝ Վրաստանի պատրաստակամության հիմքում ընկած է պետականության եւ տարածքային ամբողջականության վերականգնման իր ռազմավարական նպատակը: Վրաստանն իր զինված ուժերի բարեփոխման ուղղությամբ որոշակի առաջընթաց է արձանագրել, չնայած 2008թ. օգոստոսյան պատերազմի մեկնարկն ի ցույց դրեց այդ ջանքերի անարդյունավետությունն ու ոչ լիարժեքությունը:

Եզրակացություն

Նմանատիպ իրավիճակում ակնհայտ է, որ ռազմական ուժերի հավասարակշռությունը վերստին տարածաշրջանային անվտանգության եւ կայունության ամենաառանցքային ուղենիշներից մեկն է: Սակայն, միեւնույն ժամանակ, տարածաշրջանային անվտանգության ու կայունության առումով իրական հրամայականներն ունեն ներքին բնույթ եւ մեծապես կախված են հանրակարգային լեգիտիմությունից, օրենքի գերակայությունից, լավ կառավարումից, ինչպես նաեւ տեղական տնտեսությունից ու քաղաքականությունից, քան՝ մեծ աշխարհաքաղաքականությունից:

Ռիչարդ Կիրակոսյան
ՌԱՀՀԿ տնօրեն